Իրանահայ համայնք

§Ռաֆֆի» համալիրի նորընտիր Վարչության անդրանիկ նիստը

2010թ. օգոստոսի 1-ին, Թեհրանի ՀՄՄ «Ռաֆֆի» համալիրում կայացավ հերթական՝ 15-րդ Ընդհանուր ժողովը, որի ավարտին կայացավ նոր վարչական ընտրություններ: Հետայնու ընթացիկ օգոստոսի 8-ին, Ընդհանուր ժողովի նախագահության հրավերով, կայացավ նորընտիր Վարչության անդրանիկ նիստը, որի ընթացքում կատարվեց դիվանի ընտրություն և պատասխանատվու-թյունների բաժանում ըստ հետևյալի.

1-պրն. Վարդան Բաբախանյան՝ Նախագահ
2-պրն. Վիգեն Մանդանի՝ Փոխնախագահ, Երեցների և Սկաուտական բաժանմունքների պատասխատու – կապ
3-տկն. Քաթրին Խուդաղուլյան՝ Քարտուղարության և Սկաուտական բաժանմունքների պատասխանատու – կապ
4-պրն. Նորիկ Ղարիբյան՝ Նյութականի պատասխանատու, Ֆուտբոլի հանձնախմբի կապ
5-տկն. Վալերիկ Ամիրյան՝ Մշակութային բաժանմունքի պատասխանատու – կապ
6-պրն. Ժորես Դիլանչյան՝ Մարզական բաժանմունքի պատասխանատու – կապ
7-տկն. Վիոլետ Մուրադյան՝ Կանանց բաժանմունքի պատասխանատու – կապ:

Այս մասին տեղեկացնում է ՀՄՄ «Ռաֆֆի» համալիրի Վարչությունը:

Մեր տղաները Սրբազան լեռան գագաթին

2010թ. հուլիսի 17-ին 7-ը իրանահայ տղաներ վաստակավոր լեռնագնաց Արա Ոսկանյանի գլխավորությամբ և Էդիկ Անդրեասյանի համադրումով և պատասխանատվությամբ նվաճեցին մեր Կարոտի լեռը՝ Արարատը և հայոց եռագույնը ծածանեցին նրա ձյունածածկ գագաթին: Կեցցեք տղաներ…

«Արաքս» շաբաթաթերթ

Արտաքին որոշ ուժեր շահագրգռված են թուլացնելու բազմադարյա իրանահայ համայնքը

30 August, 2010 Իրանահայեր Լրատու ցանց

Իրանահայ համայնքը, որպես Իրանի ազգային փոքրամասնություն, Իրանում մեծ հարգանք է վայելում, Իրանի մյուս քաղաքացիների հետ հավասար մասնակցել է երկրի պաշտպանությանը և համաձայն Իրանի սահմանադրության՝ իրանահայերն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում երկրում:

Այդ մասին հայտնում է իրանական «աթինյուզ.քոմ» կայքը:Համաձայն տեղեկատվության՝օտարերկրյա որոշ ուժեր շահագրգռված են թուլացնելու բազմադարյա իրանահայ համայնքը: Մասնավորապես՝ Իրանում Ավստրիայի դեսպանությունը, համագործակցելով հրեական մի կազմակերպության հետ, իրանահայերին հեշտացված կարգով տրամադրում է մուտքի արտոնագիր, և 3000 դոլար՝ Ավստրիայում ժամանակավոր կեցություն ապահովելու նպատակով: Որոշ ժամանակ Ավստրիայում ապրելուց հետո իրանահայերը մեկնում են ԱՄՆ:Նշենք, որ իրանահայերն Իրանի Մեջլիսում ներկայացված են երկու պատգամավորներով, իսկ Հայ առաքելական եկեղեցին գործում է Թավրիզի, Թեհրանի և Սպահանի ազգային առաջնորդարաններով:

Հայաստան

ԼՂՀ նախագահը շնորհավորական ուղերձ է հղել Արցախի Հանրապետության օրվա առթիվ



ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանն այսօր շնորհավորական ուղերձ է հղել Արցախի Հանրապետության օրվա առթիվ: Ինչպես «Արմենպրես»-ին հայտնեցին ԼՂՀ նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունից, ուղերձում ասված է.

«Սիրելի հայրենակիցներ,
Ի սրտե շնորհավորում եմ ձեզ մեր պետական տոնի՝ Արցախի Հանրապետության օրվա առթիվ: Այս տոնը

թանկ ու հիշարժան է բոլոր արցախցիների համար, որովհետեւ յուրաքանչյուրն իր անձնական ավանդն ունի մեր անկախ պետականության կայացման ու զարգացման գործում: Իհարկե, մենք դեռեւս շատ անելիքներ ունենք թե արտաքին քաղաքական, եւ թե սոցիալ-տնտեսական դաշտում:

Բայց մի բան հստակ է ու անփոփոխ. Արցախի ժողովուրդն ու իշխանությունները հաստատակամ են ու անսասան ազգային նպատակների իրականացման մեջ եւ կանեն հնարավորը Արցախի Հանրապետության պայծառ ու լուսավոր ապագայի կերտման համար: Հայրենիքը միշտ վառ է պահում իր զավակների հիշատակը, ովքեր սեփական կյանքն են զոհաբերել հանուն ազատ ու անկախ Արցախի:

Հավե~րժ փառք ու պատիվ մեր նահատակներին: Սեպտեմբերի 2-ը տոն է նաեւ մեր հայրենակիցների համար՝ Հայաստանում եւ Սփյուռքում, ում միացյալ ջանքերով այսօր կանգուն է հայոց հինավուրց Արցախը եւ շարունակում է ծաղկել ու բարգավաճել: Թանկագին հայրենակիցներ, կրկին շնորհավորում եմ բոլորիս այս կարեւորագույն տոնի առթիվ եւ մաղթում խաղաղություն, քաջառողջություն ու ամենայն բարիք»:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆԱԾ ԱՂՄՈՒԿԸ ՀԵՆՑ ԻՐԵՆ ԴՐԵՑ ՈՉ ՇԱՀԵԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ

ՀՀ ԱԳՆ. Հայաստանն աշխատել է միջազգային հանրությանը իրազեկել ադրբեջանական բանաձեւի ապակառուցողական էության մասին

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Ազգ

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում վերջին իրադարձությունները՝ կապված Ադրբեջանի բանաձեւային նոր նախաձեռնության ու դրա ճակատագրի հետ, հիմնական թեմա են ինչպես քննադատության, այնպես էլ ինքնագոհության համար: Որոշ պարզաբանումներ «Ազգ»-ին տրամադրել է Հայաստանի փոխարտգործնախարար Արման Կիրակոսյանը:

- Պրն Կիրակոսյան, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի վերջին նստաշրջանում Ադրբեջանի նախաձեռնած հերթական բանաձեւի նախագիծը հանվեց քննարկումից՝ թողնվելով հաջորդ նստաշրջանին: Ինչպե՞ս կմեկնաբանեիք նման քայլը, երբ բանաձեւի նախագծի քննարկման հետաձգումը ներկայացվում է որպես ԵԱՀԿ համանախագահող երկրների ճնշման արդյունք:

- Նախ՝ պետք է հստակություն մտցնել այս հարցադրման մեջ: Խոսքն այստեղ ոչ թե բանաձեւի նախագծի քննարկումը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հաջորդ նստաշրջան տեղափոխելու մասին է, այլ՝ քննարկումից ընդհանրապես հանելու: Խոսքը ոչ թե բանաձեւի, այլ օրակարգի կետի 65-րդ նստաշրջանի օրակարգում ընդգրկելու մասին է: ՄԱԿ-ում բանաձեւի նախագծի հետաձգում մեկ այլ նստաշրջանի հնարավոր չէ: Տվյալ նախագիծը քվեարկության չդրվելու պարագայում՝ համապատասխան նստաշրջանի ավարտից հետո այլեւս դադարում է գոյություն ունենալ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրները, ինչպես նաեւ միջազգային հանրության գերակշիռ մասը դեմ են արտահայտվել ԼՂ հակամարտության կարգավորման ներկայիս ձեւաչափի փոփոխմանն ուղղված որեւէ քայլի եւ միանշանակ սատարել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին: Բնականաբար, Ադրբեջանի նման ապակառուցողական կեցվածքը, աջակցություն չգտնելով անդամ երկրների կողմից, բացասաբար պիտի անդրադառնար վերջինիս հեղինակության վրա, այն ոչ միայն թույլ չէր տա Բաքվին ինչ-որ դիվիդենտներ ստանալ, այլեւ՝ հակառակը: Դա էլ հիմնականում պատճառ դարձավ Ադրբեջանի կողմից բանաձեւը քվեարկության չներկայացնելու համար:

- Արդյոք այդ նախագծի գոյությունը հաջորդ նստաշրջանի օրակարգում չի՞ կարող օգտագործվել որպես ճնշման լծակ Հայաստանի նկատմամբ:

- Ինչպես բազմիցս նշվել է, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձեւերը խորհրդատվական բնույթ են կրում: Ավելին, մի բանաձեւ, որը ՄԱԿ-ի անդամ երկրների գերազանցող մեծամասնության աջակցությունը չի վայելում, չի կարող որեւէ ազդեցություն ունենալ, առավել եւս՝ լծակ լինել: Այնուհանդերձ, Հայաստանը մշտապես շեշտել է, որ զանազան միակողմանի փաստաթղթերի առաջադրումը տարբեր ատյաններում, եւ ՄԱԿ-ը բացառություն չէ, որտեղ հաշվի չեն առնվում Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը եւ ազատ սեփական կյանքը տնօրինելու ցանկությունը, միայն բացասաբար է անդրադառնում բանակցային գործընթացի վրա՝ ստեղծելով անհարկի խոչընդոտներ ու ձգձգումներ: Դրա մասին է խոսում նաեւ անցյալի փորձը: Այս տեսակետից եւս որեւէ նման թերարժեք փաստաթուղթ չի կարող դառնալ ճնշման լծակ ոչ Հայաստանի, ոչ ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցային գործընթացի, ոչ էլ Լեռնային Ղարաբաղի վրա:

- Հնչում են տարբեր մեկնաբանություններ եւ գնահատականներ, թե ՄԱԿ-ում նման իրավիճակը Հայաստանի արտաքին քաղաքականության պարտվողականության արդյունք է: Միեւնույն ժամանակ, անգամ այս բանաձեւի նախագիծը քվեարկության դրվելու դեպքում, անկասկած էր, որ կընդունվի: Ինչպե՞ս է Հայաստանը փորձում շտկել իրավիճակը:

- Կարծում եմ, սխալ է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ինչ-որ նախագծի անցնել-չանցնելը կապել արտաքին քաղաքական հաջողության կամ անհաջողության հետ: Նախ, ցանկացած երկիր իրավունք ունի բանաձեւի նախագիծ ներկայացնել: Այլ խնդիր է, թե նշյալ նախաձեռնությունը որքանով է սատարվում մյուս պետությունների կողմից, եւ որքանով է այն առաջ մղում միջազգային գործընթացները: Ցավոք, լինում են նաեւ ձեւական բնույթի նախագծեր, որոնք ավելի շատ նպատակ ունեն ինչ-ինչ քվեներ շահելու, բայց որոնց օգտակարությունը խիստ կասկածելի է: Պարզապես գործող ընթացակարգերի արդյունքում դրանք կարող են ընդունվել, փաստացիորեն մնալով թղթի վրա: Նույն ՄԱԿ-ում տարբեր երկրների դեմ տարբեր ժամանակներում բանաձեւեր են ընդունվել, սակայն դրանով նշված պետությունների վարկանիշն ամենեւին չի նվազել, իսկ արտաքին քաղաքականությունը վնաս չի կրել: Արտաքին քաղաքական հաջողությունները, կարծում եմ, պետք է գնահատել արդյունքով, այլ ոչ թե աղմկահարությամբ: Եվ կոնկրետ այս դեպքում ճիշտ հակառակն էր. ադրբեջանցիների հանած աղմուկի պարագայում հենց իրենք էին հայտնվել ոչ շահեկան վիճակում:

- Ի՞նչ է արվել Հայաստանի ԱԳ նախարարության կողմից բանաձեւի հնարավոր բացասական ազդեցությունը կանխելու համար:

- Հնարավոր բացասական ազդեցությանն արդեն նախորդ հարցի ժամանակ անդրադարձ արվեց: Ինչ վերաբերում է գործադրած ջանքերին, ապա հանրապետության նախագահը, արտգործնախարարը եւ նախարարությունը

անհրաժեշտ աշխատանք են իրականացրել միջազգային հանրությանը ադրբեջանական այդ քայլի ապակառուցողական էության մասին իրազեկելու ուղղությամբ: Դրա արդյունքում է, որ այդ բանաձեւի նախագիծը հանվել է քննարկումից: Մի քանի օրերի ընթացքում մեր դիվանագիտական ներկայացուցչությունները 600-ից ավելի հանդիպումներ են ունեցել այլ երկրների ներկայացուցիչների հետ, արտգործնախարարը հարյուրավոր հեռախոսազրույցներ է ունեցել իր գործընկերների հետ, 200-ից ավելի նամակներ է ուղարկել իր գործընկերներին, միջազգային կառույցների ղեկավարներին: Այսինքն՝ բոլոր հնարավոր ջանքերը գործադրվել են բանակցային գործընթացը անխաթար պահելու համար:

ՄԻԱԿ ԼՈՒԾՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՈՒՄՆ Է

Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորումը կարող է ունենալ միայն մեկ լուծում, եւ այդ լուծումը Արցախի միջազգայնորեն ճանաչված անկախությունն է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության տոնի կապակցությամբ իր շնորհավորական ուղերձում այսպիսի հայտարարություն է արել Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը:

Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ նախագահը, շնորհավորելով Արցախին տոնի առիթով, նշել է, որ Արցախի անկախությունը հայոց նորագույն պատմության ամենավառ էջերից է, մեր ժողովրդի մեծագույն ձեռքբերումը: «Մեր ողջ ժողովրդի պայքարով կերտած քաղաքական ազատությունն այսօր իրողություն է: Ավելին, Լեռնային Ղարաբաղն իր պետական կուռ կառույցով ու պաշտպանության բանակով լուրջ գործոն է տարածաշրջանում», ասել է Հայաստանի նախագահը:

Արցախի ներքին կայունությունը, արցախահայության միասամ ու վճռական կեցվածքը, երկրամասի համակողմանի զարգացումը որեւէ իրատես մարդու մեջ, ըստ Սարգսյանի, կասկած չեն հարուցում նրա ազատ ու բարգավաճ ապագայի վերաբերյալ:

«Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորումը կարող է ունենալ միայն մեկ լուծում, եւ այդ լուծումը Արցախի միջազգայնորեն ճանաչված անկախությունն է: Ինչ վերաբերում է խնդրի լուծման ռազմական ճանապարհին, ապա այդ ուղին, սիրելի՛ արցախցիներ, մենք ձեզ հետ արդեն անցել ենք, եւ այդ տարբերակի արդյունքները բոլորի աչքի առաջ են», նշել է Սերժ Սարգսյանն իր ուղերձում:

«ԵԹԵ ՄԵԶ ՊԱՏԵՐԱԶՄ ՊԱՐՏԱԴՐԵՆ՝ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ»

«Եվրոպայի ժողովրդավարական երիտասարդական համայնք» կազմակերպությունը միավորում է 60 երկրի կուսակցությունների երիտասարդական թեւերը: Կազմակերպությանն անդամակցում է նաեւ ՀՀԿ-ի երիտասարդական թեւը: Այս կազմակերպության 11 երկրի 18 ներկայացուցչի հետ հանդիպմանը Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը, ի թիվս այլ թեմաների, խոսել է նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին: Նա նշել է, որ խնդիրը պետք է լուծվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում, խաղաղ ճանապարհով. « Մինչդեռ Ադրբեջանը շարունակում է ռազմատենչ հայտարարություններ անել: Մենք պատերազմ չենք ուզում, բայց եթե Ադրբեջանի իշխանությունները մեզ պատերազմ պարտադրեն, պատրաստ ենք պաշտպանել մեր երկիրն ու ժողովրդին եւ ԼՂ պետությունը», ասել է նա:

Ռուսաստանը Հայաստանին ապահովելու է ռազմական ժամանակակից տեխնիկայով. Նալբանդյան

Ռուսաստանը Հայաստանին ապահովելու է ռազմական ժամանակակից տեխնիկայով: Այդ մասին այսօր հայտարարել է ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Россия-24 հեռուստաալիքին տված հարցազրույցում: Պատասխանելով լրագրողի հարցին, Նալբանդյանն ասել է, որ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի՝ Հայաստան կատարելիք այցի ընթացքում նախատեսվում է ստորագրել Հայաստանում ռուսական ռազմաբազայի գործունեության երկարաձգման մասին համաձայնագիր: Նալբանդյանի խոսքով, եթե մինչ այդ համաձայնագիրը ռուսական ռազմաբազան գործել է 25 տարի, ապա այժմ այն գործելու է 49 տարի՝ սկսած 1995-ից: «Ավելի հստակ ձևակերպում է նշվելու այն մասին, որ ռուսական ռազմական բազան Հայաստանի զինված ուժերի հետ համատեղ և Ռուսաստանի շահերը հաշվի առնելով պաշտպանելու է Հայաստանի անվտանգությունը: Եվ այդ նպատակների իրականացման համար ռուսական կողմը օժանդակելու է՝ Հայաստանի Հանրապետությանը ապահովելով ռազմական ժամանակակից տեխնիկայով», -մանրամասնել է նախարար Նալբանդյանը: Նկատենք, որ 102-րդ ռուսական ռազմական բազան Հայաստանի Գյումրի քաղաքում է գտնվում 1995 թվականից:

ԱԼԻԵՎՆ ԱԴՐԲԵՋԱՆԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ ՊԱՐՏՔ է 200 ՄԼՐԴ ԴՈԼԱՐ

Ադրբեջանահայերի ասամբլեայի նախագահ Գրիգորի Այվազյանը ՄԱԿ-ի փախստականների գրասենյակ հայց է ներկայացրել՝ պահանջելով Բաքվի կենտրոնում գտնվող իր բնակարանը վերադարձնել իրեն, իր կյանքի ու անվտանգության երաշխիքներ տալ, որպեսզի ինքն ապրի Բաքվում:

Այվազյանը միակը չէ, որ ցանկանում է վերադառնալ Բաքու: Շահումյանից, Կիրովաբադից, Գանձակից, Գետաշենից Հայաստան գաղթած բազմաթիվ հայեր երազում են հայրական օջախ վերադառնալու մասին:

«Դարձանք վայրագությունների զոհ, կորցրեցինք մեր տունը, եւ եթե Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը այսօր խոսում է ադրբեջանցի գաղթականների մասին, ապա մենք էլ պետք է բարձրաձայնենք ադրբեջանահայ գաղթականների հարցը», ասում է նա: Ըստ Այվազյանի՝ ադրբեջանահայ գաղթականների հետ ընդունումը Ադրբեջանի համար վերջին շանսն է ապացուցելու, որ ժողովրդավար երկիր է եւ կարող է քաղաքակիրթ երկրների հետ ոտք մեկնել:

Այվազյանի՝ ԱՄՆ դեսպանատանը ուղարկած նամակին պատասխանել են, որ եթե խոսում ենք ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում փախստականների խնդրի մասին, ապա խոսքը վերաբերում է երկու կողմերին:

Եթե Ադրբեջանը չհամաձայնի փախստականների վերադարձին, ապա ադրբեջանահայերը կպահանջեն

փոխհատուցում: Ադրբեջանահայերի ասամբլեայի նախագահը հաշվել է Հայաստան գաղթած ադրբեջանահայերի կորցրած տների ու հարստության արժեքը՝ գումարել բարոյական վնասն, ու ստացվել է 200 մլրդ դոլար գումար: Այդ պարտքն իրենց պետք է վերադարձնի Իլհամ Ալիեւը:

ԴՄԻՏՐԻ ՄԵԴՎԵԴԵՎՆ ԱՅՑԵԼԵՑ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ ՈՒ ՀԻԱՑԱՎ ԱՐԱՐԱՏԻ ՏԵՍԱՐԱՆՈՎ

Նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով օգոստոսի 19-ին պետական այցով տիկնոջ՝ Սվետլանա Մեդվեդեւայի հետ Երեւան ժամանող Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի ինքնաթիռը վայրէջք կատարեց երեկոյան 19:30-ին: «Զվարթնոց» օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին դիմավորում էր Սերժ Սարգսյանը տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի հետ: ՌԴ նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին արտաքին գործերի նախագահ Սերգեյ Լավրովը, պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովը, տրանսպորտի նախարար, տնտեսական համագործակցության հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Իգոր Լեւիտինը, ՌԴ Հյուսիսարեւմտյան դաշնային շրջանի ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Իլյա Կլեբանովը, Ուլյանովսկի նահանգապետ Սերգեյ Մորոզովը, պաշտոնատար այլ անձինք: ՌԴ նախագահի այցն ու հատկապես Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ կնքվելիք ռազմաստրատեգիական պայմանագիրը տարածաշրջանի վերլուծաբանների, քաղաքագետների, հեղինակավոր լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում են:

Դմիտրի Մեդվեդեւի առաջին կանգառը Ծիծեռնակաբերդի բարձունքն էր, ուր նա բարձրացավ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի ուղեկցությամբ: Հայոց եղեռնի զոհերի հուշարձանին ծաղկեպսակ դնելու արարողության ժամանակ հնչեց ՌԴ հիմնը, ինչը նշանակում է ողջ Ռուսաստանի խոնարհումը Ցեղասպանության զոհերի հիշատակին: «Հայոց ցեղասպանության թանգարանը եւ հուշահամալիրը 20-րդ դարի սարսափելի ողբերգության վկայությունն են, միաժամանակ հիշեցնում են, որ կյանքն այն գլխավոր արժեքն է, որը քաղաքակիրթ ժողովուրդների կողմից ենթակա է պահպանության»: Այս խոսքերը Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հուշամատյանի 2008 թ հոկտեմբերի 21-ի Դմիտրի Մեդվեդեւի գրառումն են:

Այդ ժամանակ ՌԴ նախագահը հուշահամալիրի Հիշողության պուրակում ծառ տնկեց ի հիշատակ 1915 թվականի Հայոց ցեղասպանության զոհերի: Երեկ արդեն նախագահ Մեդվեդեւը ջրեց երկամյա եղեւնին:

Ցեղասպանություն թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը նախագահին հակիրճ ներկայացրեց հուշահամալիրի կառուցման պատմությունը, պատմություններ գրականությունից, որոնք առնչվում են հայ-ռուսական հարաբերություններին: Նախագահ Մեդվեդեւն էլ անկեղծացավ ու խոստովանեց, որ հիացած է բարձունքից բացվող մայրամուտի հրաշալի պատկերով եւ Արարատի տեսարանով:

ՌԴ նախագահի այցի շրջանակներում նախատեսվում է Հայաստանում ռուսական 02-րդ ռազմաբազայի ներկայությունը մինչեւ 2044 թ.-ը երկարաձգելու արձանագրության ստորագրումը: Այսօր Դմիտրի Մեդվեդեւը կմասնակցի «Պատվո բլուր» զինվորական գերեզմանի հանդիսավոր բացման արարողությանը, ուր ամփոփած են 19-րդ դարի ռուս-թուրքական պատերազմներին մասնակցած ռուս սպաների մարմինները:

Պետական այցի ավարտին ՌԴ նախագահը կմասնացկի նաեւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ-երկրների ղեկավարների՝ օգոստոսի 20-22-ը Հայաստանում անցկացվելիք ոչ պաշտոնական գագաթաժողովին:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն հայոց կաթողիկոսության եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության կանոնական հանձնախմբի ժողովի

Նախորդ համարում հրապարակել էինք Մայր աթոռից ստացված հաղորդագրությունը Ս. Էջմիածին-Անթիլիաս ծիսական խառը հանձնախմբի անդրանիկ նիստի գումարման մասին: Այսօր հրապարակում ենք երկու կաթողիկոսությունների միջեւ կանոնական խառը հանձնախմբի հերթական նիստի մասին ստացված նոր հաղորդագրությունը, որը, ինչպես եւ նախորդը, հաստատում է «Ազգի» նախապես ունեցած տեղեկությունը առ այն, որ զույգ կաթողիկոսությունների միջեւ ըստ երեւույթին «ձնհալ» է սկսվել, որն անկասկած սկիզբ է առել Ամենայն հայոց հայրապետի եւ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի միջեւ անձնական շփումներից, ինչը միմիայն գոհունակություն կարող է պատճառել Հայ եկեղեցու երկփեղկված վիճակով մտահոգ զանգվածներին:

Խմբ.

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսի օրհնությամբ եւ բարձր տնօրինությամբ 2005 թ. ստեղծված կանոնական հանձնախումբը սույն թվականի օգոստոսի 18-19 Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում գումարեց իր հերթական ժողովը:

Համատեղ հանձնախմբի նպատակն է իր աշխատանքով նպաստել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու սրբազան առաքելության առավել ծաղկմանը եւ ներքին միասնականության ամրապնդմանը, Հայ եկեղեցու կյանքում առկա կանոնական խնդիրների քննությանն ու լուծումների առաջադրմանը:

Կանոնական հանձնախմբի անդամներն են՝

Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը (ատենապետ).

Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը (ատենապետ).

Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը (ատենադպիր).

Տ. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը (ատենադպիր).

տիար Ջիմ Գալուստյանը.

տիար Արսեն Դանիելյանը.

տիար Նիկոլայ Հովհաննիսյանը.

տիար Տիգրան Ջինբաշյանը:

Օգոստոս 18-ին վեհարանում ժողովի մասնակիցներին ընդունեց Ամենայն հայոց կաթողիկոսը: Նորին սրբությունը, հայրապետական իր օրհնությունը բերելով ժողովականներին, բարի արդյունավորում մաղթեց ժողովի աշխատանքներին: Հանդիպման ընթացքում Օշական սրբազանը Վեհափառ հայրապետին փոխանցեց Արամ Ա Վեհափառ հայրապետի եղբայրական ողջույնները:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Ատենապետների ողջույնի խոսքերից հետո «Հայ եկեղեցու կանոնական վիճակը (հայ եկեղեցաբանության սահմանումը)» թեմայի շուրջը հանձնախմբի ուշադրությանը զեկույցներ ներկայացրեց Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը («Ընդհանուր ներածական եւ եկեղեցաբանության աստվածաշնչական հիմերը»), Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը («Հայ եկեղեցու աստվածաբանական-եկեղեցաբանական սահմանումը») եւ Միքայել եպիսկոպոս Աջապահյանը («Հայ եկեղեցու գործնական արտահայտությունը ներկայիս»): Յուրաքանչյուր զեկուցումից հետո զեկուցողները պատասխանեցին ժողովականների հարցումներին: Տեղի ունեցավ մտքերի փոխանակում եւ ընդհանուր քննարկում:

Ժողովի ավարտին, ելնելով ժողովի աշխատանքի ջերմ, կառուցողական մթնոլորտից եւ արդյունքներից, ժողովականները համոզում հայտնեցին, որ որդեգրած առաջադրանքների իրագործումը մեծապես պիտի նպաստի Հայ եկեղեցու հզորացմանը եւ միասնականությանը:

Քննարկում Գյումրիում

Օգոստոսի 4-ին, Գյումրիում «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի և «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» նախաձեռնող խմբի նախաձեռնությամբ ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում կայացավ քննարկում, նվիրված Կառավարության կողմից Ազգային Ժողովին ներկայացված և առաջին ընթերցմամբ ընդունված՝ «Լեզվի մասին» և «Հանրակրթության մասին» օրենքներում առաջարկվող փոփոխություններին: Քննարկմանը մասնակցում էին Գյումրիում գործող հասարակական կազմակերպություններ, ԶԼՄ ներկայացուցիչներ և մտավորականներ: Հանդիպման վերջում պատրաստվեց և հրապարակվեց բաց նամակ ի պատասխան «Դիլիջան» միջազգային դպրոցի նախաձեռնողների վերջերս Հանրային Խորհրդին ուղղված բաց նամակի:

Բաց նամակը ազատ է ստորագրությունների համար: Ստորագրել ցանկացողները կարող են այցելել Գյումրիում «Շիրակ կենտրոն» ՀԿ (Վարպետաց 176) կամ Ժուռնալիստների «Ասպարեզ ակումբ» (Պուշկինի 26): Նամակին կարելի է միանալ նաև համաձայնություն ուղարկելով՝ asparezclub@yahoo.com, info@shirakcentre.org էլեկտրոնային հասցեներին:

ՈՒԵԼՍԻ ՔԱՐԴԻՖԻ ԱՄՐՈՑԸ «ՃԱՆԱՉԵՑ» ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Մեծ Բրիտանիայի խորհրդարանի պատգամավոր Սթիվեն Փաունդը ճանաչողական այցով ժամանել է Ստեփանակերտ: Օգոստոսի 18-ին նրան ընդունել է ԼՂՀ Աժ նախագահ Աշոտ Ղուլյանը, քննարկվել են «Ղարաբաղի եւ Մեծ Բրիտանիայի խորհրդարանների համագործակցության հարցեր»: Սպասելով այդ համագործակցության կայացմանը, ինչպես նաեւ Ադրբեջանի «սեւ ցուցակի» հերթական թարմացմանը, նշենք, որ այս օրերին Բրիտանիայում՝ Ուելսում եւս մեկ հիշատակում է եղել Ղարաբաղի վերաբերյալ: Ադրբեջանական «ԱՊԱ»-ի տեղեկացմամբ՝ Ուելսի մայրաքաղաք Քարդիֆի ադրբեջանցի բնակիչներից մեկը հայտնաբերել է, որ Քարդիֆի հինավուրց ամրոցից հանվել է Ադրբեջանի դրոշը, փոխարենը ամրոցի վրայից ծածանվում է ԼՂՀ եռագույնը: Հիշյալ ամրոցի վրա կան մի շարք պետությունների դրոշներ, որոնցից մեկը, փաստորեն, արդեն հայկական երկրորդ պետության դրոշն է:

Համահայկական էլեկտրոնային գրադարանի ինտերնետային կայքի նախնական տարբերակը պատրաստ կլինի նոյեմբերին

ԵՐԵՎԱՆ, 19 ՕԳՈՍՏՈՍԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Համահայկական էլեկտրոնային գրադարանի ինտերնետային կայքի նախնական տարբերակը պատրաստ կլինի նոյեմբերին: Ինչպես «Արմենպրես»-ի հետ զրույցում նշեց Հայաստանի սփյուռքի նախարարության աշխատակազմի տեղեկատվության եւ հեռահաղորդակցության վարչության պետ Տիգրան Հարությունյանը, կայքի ստեղծման աշխատանքներով զբաղվում է «Մասակա» ընկերությունը, որը հաղթող էր ճանաչվել նախապես հայտարարված մրցույթում:

Տ. Հարությունյանի խոսքով, էլեկտրոնային գրադարանի կայքը կունենա բազմաթիվ հնարավորություններ, այն կլինի բազմալեզու: «Արեւելահայերենից եւ արեւմտահայերենից բացի կայքում կտեղադրվեն նաեւ այլ լեզուներով գրքեր, որովհետեւ կան բազմաթիվ հայազգի գրողներ, ովքեր ունեն անգլերենով կամ այլ լեզվով գրված ստեղծագործություններ»,-ասաց Տ. Հարությունյանը: Նրա խոսքով, էլեկտրոնային գրադարանի ստեղծումը լավ հնարավորություն է, որպեսզի Հայաստանի հասարակությունը ծանոթանա Սփյուռքի գրական գործիչների ստեղծագործություններին եւ հակառակը:

Տ. Հարությունյանը նկատեց, որ գրեթե բացակայում են հայկական էլեկտրոնային գրադարանները: Սփյուռքի ցրվածությունն աշխարհով մեկ հնարավորություն չի ստեղծում շփվելու հայ գրականության հետ: Ըստ նրա՝ էլեկտրոնային գրադարանի ստեղծմամբ Սփյուռքում ապրող հայրենակիցները կկարողանան հաղորդակից դառնալ հայ գրականությանը, արվեստին, ազգային արժեքներին:

Մինչեւ տարվա վերջ որոշակի գրականություն արդեն թվայնացված կլինի, իսկ հետագայում արդեն ֆոնդը պարբերաբար կթարմացվի: Տ. Հարությունյանը նշեց, որ այդ հարցում նախատեսում են սերտորեն համագործակցել ինչպես Հայաստանի, այնպես էլ Սփյուռքի հրատարակիչներ, գրողների հետ:

Սփյուռք

ԱՐԱԲԵՐԵՆ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ՝ ՆԱԽՈՐԴԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ

Դիմակայելու նպատակով արաբական աշխարհում թուրքական եւ ադրբեջանական մեծածավալ հակահայկական քարոզչությանը, այս տարվա ապրիլից Կահիրեում սկսել է հրատարակվել ՀԲԸՄ-ի արաբերեն լեզվով «Արեգ» պարբերականը, լրացնելով այն բացը, որը ստեղծվել էր մինչեւ անցյալ տարվա ապրիլը մոտ տասներկու տարի անխափան հրատարակված, Կահիրեի հայ համայնքի ՌԱԿ պաշտոնական օրգանի՝ «Արեւի» արաբերեն հավելվածի դադարեցումով: «Ազգ»-ն իր էջերում բազմիցս էր անդրադարձել արաբերեն լեզվով հրատարակվող «Արեւի» կարեւոր առաքելությանը:



Ուրախալի է նշել, որ ՀԲԸՄ-ն ընդհանրապես եւ նրա Եգիպտոսի մասնաճյուղը մասնավորապես, ճիշտ գնահատելով նման հույժ այժմեական ծրագրի իրականացումը, թիկունք է կանգնել դրան: Ուրախալի է նաեւ, որ ինչպես նախորդի, այնպես էլ նոր պարբերականի խմբագիրն է իր գործին նվիրյալ՝ արաբական աշխարհում ծանոթ պատմաբան դոկտ. Մոհամեդ Ռիֆաաթ էլ Իմամը, որն անդրանիկ համարի «Վերադարձ սկզբին» խորագրով հոդվածում գրում է, թե հայերի եւ արաբների միջեւ գոյություն ունեցող պատմական կապերի հենքի վրա եւ այդ կապերը ընդլայնելու ՀԲԸՄ-ի ստանձնած առաքելության որպես արտահայտություն, ներկայի եւ ապագայի որոշակի դրդապատճառներ ուղղակի անհրաժեշտություն են դարձնում արաբերեն նման հրատարակության լույս ընծայումը: Պարբերականի հայկական նյութերի պատասխանատու խորհրդատուն է անխոնջ մտավորական, ՀԲԸՄ-ի Եգիպտոսի շրջանակային հանձնաժողովի երկարամյա ատենապետ Պերճ Թերզյանը, ով հուլիսին հրավիրված էր Երեւան՝ մասնակցելու գրողների համահայկական 5-րդ համաժողովին: Խմբագրության քարտուղարն է Ալի Սաբետ Սաբրին: Պարբերականը բաղկացած է 21x29 սմ չափսի 24 էջերից, տպագրությունը իրականացնում է «Դիզայն Արտ» հրատարակչությունը: Արդեն հրատարակվել է հինգ համար: Ըստ ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» պաշտոնաթերթի, պարբերաթերթն անվճար առաքվելու է արաբական աշխարհում գործող համալսարաններին, գրադարաններին եւ ճանաչված մտավորականներին, այնպես էլ Կահիրեում եւ Երեւանում գործող արաբական պետությունների դեսպանատներին եւ մշակութային հաստատություններին:

Անխափան երկար ու բարի երթ «Արեգ» նոր պարբերականին:

ՀԱԿՈԲ ՇՈՒԼԻԿՅԱՆ-Ազգ-Երեւան

Իրան

Թուրքական մամուլ. Իրանի փոխնախագահի խոսքերը՝սառը ցնցուղ Թուրքիայի համար

<<Իրանից Թուրքիայի համար սառը ցնցուղ>>,- թուրքական Milliyet պարբերականը նման խորագրով հոդվածով է անդրադարձել Իրանի փոխնախագահ Համիդ Բաղայի՝ Թեհրանում կայացած կոնֆերանսներից մեկի ժամանակ 1915 թվականի ոճրագործությունը որպես Ցեղասպանություն որակելու փաստին: Թուրքական թերթը նշում է, որ սա իսկական սառը ցնցուղ է այն դեպքում, երբ այժմ թուրք-իրանական հարաբերությունները զարգացում են ապրում: Միևնույն ժամանակ Milliyet-ն ուշադրության է հրավիրում այն բանի վրա, որ մինչ այժմ Իրանում նման դիրք ունեցող ոչ մի պաշտոնյա չէր օգտագործել <<ցեղասպանություն>> բառեզրը:

Հիշեցնենք, որ Իրանի փոխնախագահ Համիդ Բաղայը դաշնակիցների կողմից Իրանի գրավման 70-րդ տարելիցի կապակցությամբ <<Իրան. հաղթանակի կամուրջը>> կոնֆերանսի ժամանակ բացեիբաց նշել է, որ Օսմանյան կայսրությունում 1915 թվականի կատարվածը ցեղասպանություն է, ու չնայած այսօր Օսմանյան կայսրությունը գոյություն չունի, սակայն Հայաստանը Թուրքիայից է պահանջում ներողություն խնդրել և փոխհատուցում վճարել:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒ ՍՏԵՂԾՈՒՄԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Վերջերս ակտիվացել են Հայաստան-Իրան բարձր մակարդակի երկկողմ փոխայցելությունները, ձեւավորվել է արդյունավետ տնտեսական համագործակցություն, կյանքի են կոչվում բազմաթիվ փոխշահավետ ծրագրեր, գոյություն ունի լայն իրավապայմանագրային դաշտ, եւ կա երկկողմ պատրաստակամություն՝ առավել զարգացնելու փոխգործակցությունը:

Ըստ ԱԳՆ պաշտոնական հաղորդագրության՝ սեպտեմբերի 15-ին Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի՝ Թեհրան պաշտոնական այցելության շրջանակներում Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ հանդիպմանն այս դիրքորոշումն է արտահայտվել՝ երկու երկրների համագործակցության զարգացման առնչությամբ գոհունակությամբ:

Նալբանդյանը հանդիպել է նաեւ Իրանի ԱԳ նախարար Մանուչեհր Մոթաքիին: Հանդիպմանը քննարկվել են երկկողմ հարաբերությունների օրակարգային հարցերը՝ քաղաքական, տնտեսական, ապակենտրոնացված ու մշակութային համագործակցության, համատեղ իրականացվող ու նախատեսվող ծրագրերը, հատկապես էներգետիկ եւ տրանսպորտային ոլորտներում: Զրուցակիցները վերահաստատել են փոխշահավետության վրա հիմնված երկկողմ հարաբերությունները զարգացնելու պատրաստակամությունը՝ նշելով, որ բարձր մակարդակի փոխադարձ այցելությունների հաճախակիությունը նպաստում է համագործակցության առավել ամրապնդմանը:

«Մարդու իրավունքների հնագույն հռչակագիրը» վերադարձավ Իրան

Կյուրոս Մեծի գլանը՝ Ք.Ա. 6-րդ դարի փաստաթուղթը, որը երբեմն անվանում են «մարդու իրավունքների հնագույն հռչակագիր», Բրիտանական թանգարանի կողմից հանձնվել է Իրանին:

Ինչպես հաղորդում է Lenta.ru-ն, վկայակոչելով Associated Press-ին, գլանն արդեն Իրանում է: Նշենք, որ գլանի շուրջ վերջին շրջանում լուրջ կրքեր էին բորբոքվել: Մեծ Բրիտանիան պարտավորվել էր հանձնել հնագույն փաստաթուղթը, սակայն հետաձգում էր: Իրանն, իր հերթին, հետաձգումը բացատրում էր քաղաքական դրդապատճառներով եւ սպառնում էր խզել կապերը Բրիտանական թանգարանի հետ, եթե այն հնագույն փաստաթուղթը հետ չվերադարձվի: Թեհրանը նաեւ փոխհատուցում էր պահանջում: Բրիտանական թանգարանը հետաձգումը բացատրում էր հետազոտությունների անցկացմամբ:

Հասարակական

ԿՐՈՆԱՓՈԽ ՀԱՅԵՐԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Ռուբեն Մելքոնյան

Գերմանիայի Վիսբադեն քաղաքում, ըստ Համո Մոսկոֆյանի, կա կրոնափոխ հայերի ռեստորան–հավաքատեղի, որը կոչվում է «Անի»: Հիշյալ քաղաքում ապրում են նաեւ կրոնադարձված մի խումբ հայեր, որոնցից, օրինակ Նուրեդդին Գյունդենը, որը վերանվանվել է Սիմոն, պնդում է, թե սերում է մեծ ֆիդայի Հրալր Դժոխքի տոհմից:

Բելգիայում բնակվող կրոնադարձ հայերի մասին հետաքրքրական հոդվածով է հանդես եկել Դավիթ Զենյանը, Համաձայն որի, հիմնականում Շըրնաքից եւ Սիլոպից գաղթած քրդացած-քրդախոս հայերն այսօր վերադառնալով իրենց ինքնությանը՝ կազմում են տեղի առաքելական համայնքի հիմքը եւ հանդես գալիս որպես ջերմեռանդ քրիստոնյաներ: Նրանց երեխաները սովորում են հայերեն, եւ այդ միջոցով մայրենիին են սկսում տիրապետել նաեւ ծնողները: Բրուսելի քրդացած կամ քրդախոս հայերի համայնքի կարեւոր դեմքերից եւ հիմնադիրներից Մեսրոպ Աֆշարը, պատմելով հայրենիքում իրենց վիճակի մասին, նշում է. «Վախը եւ ճնշվածության զգացումը մեր մշտական ուղեկիցներն էին: Ճնշումները շատ էին, բայց մեր մեծերը մշտապես հիշեցնում էին մեզ, որ չնայած լեզվի կորստին՝ մենք հայ ենք»: Աֆշարը Թուրքիայում իրենց կենսակերպի մասին որոշ մանրամասներ է պատմում, որոնցից պարզ է դառնում, որ նրանք ծպտյալ հայեր են եղել եւ գաղտնի չարունակել են քրիստոնեական սովորույթները, ասորի

քահանայի միջոցով գաղտնի մկրտել իրենց երեխաներին, կատարել հարսանյաց, թաղման քրիստոնեական արարողություններ:Ինչպես շատ վայրերում, այնպես էլ Շըրնաքում վերապրած ծպտյալ հայերն ունեցել են կրկնակի անձնանուններ՝ տան եւ դրսի համար: Մեսրոպ Աֆչարն այս մասին պատմում է. «Մերոնց շրջապատում մենք հայեր էինք: Մկրտելիս մեր երեխաներին տալիս էինք հայկական անուններ, օրինակ՝ Սարգիս, Դավիթ, Նուպար, Գեւորգ եւ Սարո, բայց արտաքին միջավայրում մենք նման էինք քաղաքի մնացած բնակիչներին: Մենք կրում էինք քրտական անձնանուններ, օրինակ՝ Էուզ, Հալիք, Օդեմիշ, Բիրջին»:

Ավելորդ չէ նշել, որ հայերի այս խմբի փրկության եւ հայկականության վերադարձի մեջ եւս լուրջ դեր է ունեցել Պոլսո պատրիարք, լուսահոգի Շնորհք Գալուստյանը, ում ջանքերով 1960–ականների կեսերին հայության այս բեկորները նախ սկսել են Շըրնաքից եւ Սիլոպից տեղափոխվել Ստամբուլ, իսկ այնուհետեւ՝ 1980–ականներին, Բելգիա, Ֆրանսիա. Հոլանդիա:

Ինչպես վերը նշվեց, այսօր կրոնադարձված հայերի խմբեր կան նաեւ Շվեդիալում, որոնցից է ծնունդով Ադանայից Սուլեյման Ֆարուքը, որը, գտնելով իր իրական ինքնությունը, ընդունել է քրիստոնեություն ել փոխել անու–նը՝ դառնալով Հայկ Արամյան:Նա մեկն է բազմահազար ուծացած հայերից, որոնք ապրում են թուրքի կամ քրդի արտաքին ինքնության քողի տակ: Դեռ մանկուց կասկածներ ունենալով իր ինքնության չոլրջ՝ նա որոնել է էր արմատները եւ 1983թ. Դամասկոսում տեղի Հայկական եկեղեցում մկրտվել, իսկ երկու տարի անց՝ 1985թ. տեղափոխվել ու հաստատվել է Շվեդիայում:Իր ինքնու–թյան մասին նա նշում է. «Ներքուստ ես միշտ զգում է, որ ուրիշ եմ: Ես կարող էի քուրդ մնալ, բայց ես այլ կերպ որոշեցի»: Հաստատվելով Ստոքհոլմում՝ Հայկ Արամյանն ա մուսնացել է այնտեղ բնակվող դիարբեքիրցի հայուհու հետ, էսկ իր երկու զավակներին անվանել Մասիս եւ Անի: Երեխաները, ի դեպ, սովորել եւ տիրապետում են հայերենին: Հատկապես ուշագրավ է, որ ակունքներին վերադարձան Հայկ Արամյանը ձգտում է իր երեխաների մեջ արմատավորել ու էլ ավելի վառ պահել հայկականության զգացումը եւ այդ նպատակով նրանց մի քանի անգամ արդեն բերել է Հայաստան, մասնավորապես՝ նաեւ Արցախ:Նա նշում է. «Ես այնքան շատ բան էի բաց թողել, ես ուզում եմ, որ իմ երեխաները մեծանան՝ իմանալով, թե իրենք ով են:Ես ուզում եմ, որ իմ ոգին հպարտանա իր հայկական ծագումով»:

Այսօր Արամյանը շվեդահայ համայնքի ակտիվ անդամներից է: Հարկ է նշել, որ Հայկի ընտանիքի մի մասը մնացել է Ադանայում, ալյինքն՝ կա այնտեղ հալածվելու վախը, ինչը, սակայն, չի կարողացել խոչընդոտել նրան իրական ինքնությանը վերադառնալու համար: Ավելին՝ մի քանի տարի առաջ Շվեդիա է տեղափոխվել նաեւ նրա եղբայրը եւ կրկին վերադարձե լ արմատներեն՝ ընդունելով Արամ անունը:

Նշենք, որ եվրոպաբնակ այս Հալերը խնդրներ ունեն ինքնությունը բացահայտելու համար, քանի որ նրանց ազգականները ներկայումս էլ բնակվում են Թուրքիայում եւ կարող են դառնալ հալածանքի թիրախ, ուստի եւ երբեմն նրանք կողմ չեն շատ բաց արտահայտվելուն: Կան ընտանիքներ, որոնք կրոնադարձվելուց հետո որոշակի անհանգստություն ունենալով Թուրքիայում մնացած ազգականների համար՝ այդքան էլ բացահայտ չեն խոսում վերագտած ինքնության մասին եւ անգամ կյանքի երկակի բնույթ ունեն:Նմանատիպ մի օրինակ է Հոլանդիայում հաստատված դիարբեքիրցի Մերջանյանների ընտանիքը. նրանք 1970-ականներին Ամստերդամ տեղափոխվելուն պես վերընդունել են քրիստոնեություն, սակայն այսոր էլ Դիարբեքիրում ունեն ազգականներ:Ինչպես նշում է թուրք հետազոտող Ուղուր Ունգորը. «Այսօր, երբ նրանք այցելում են Դիարբեքիրում մնացած՝ իրենց ազգականներին, Եվրոպայի եւ Թուրքիայի միջեւ ինքնաթիռային թռիչքների ժամանակ կարելի է ականատես լինել մի կրոնից մյուսին անցման յուրահատուկ դրսեւորման, կանայք արդեն ինքնաթիռում գլուխները ծածկում են գլխաշորով, հայկական անունների փոխարեն օգտագործում մուսուլմանական անուններ եւ Դիարբեքիրում իրենց պահում են մուսուլմանների պես»:

Ամփոփելով՝ նշենք, որ եվրոպաբնակ կրոնադարձ հայերի թեմայի ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտական կարեւորություն, այլեւ խիստ այժմեական ու գործնական նշանակություն:

«Մասիս» շաբաթաթերթ, հունիս 19, *Շար. 2 եւ վերջ*

«300 միլիոնին ղեկավարում են 3 հազար սիոնիստներ»

Այսօր Բաղդադում ամերիկացի լրագրողը հարցնում է.

- Վերջապես մեկը պիտի ասի՞ ինձ, թե այս երկրի անունը Իրա՞ք է, թե՞ Իրան: Ամերիկացի զինվորը տարիներով մնում է Գերմանիայում, բայց չգիտի, թե դա ո՞ւր է: Ինքնաթիռ դնում եւ ուղարկում են: Զինվորը գիտի, թե ինքն Ամերիկայում է եւ ոչ թե Գերմանիայում: Այդպե՛ս է ուզում սիոնիզմը: 300 միլիոնին ղեկավարում են 3 հազար սիոնիստներ: Այսօր ԱՄՆ-ում կապիտալիզմ չէ՛, ստրկությո՛ն է: Մե՛ղք է ամերիկացի գյուղացին, բարի ժողովուրդը:

Լիբանանցի հայտնի քաղաքական գործիչ Ուալիդ Ջումբլատն ասում է.

- Է՛հ ամերիկացի, որ արջի նման մտավ Բաղդադ: Ո՛չ: Այդպես չէ: Ճի՞շտը:

- Էհ ամերիկացուն արջի նման տարան Բաղդադ: Ի՞նչ գործ ունես Բաղդադում, ա՛յ տխմար: Քանի՞ երկիր պիտի գրավես: Ինչպե՞ս: Հանգիստ ապրում ես: Ի՞նչ ես ուզում: Վայելի՛ր կյանքը, ա՛յ Ապուշ: Ոչ մի կապ գոյություն ունի երկուքին միջեւ. Արեւելքն ապրում է անցյալում, իսկ Արեւմուտքը ապագայում: ….Իսկ հիմա ուզում են Մեծ Միջին Արեւելք սարքել: Ոչ միայն ԱՄՆ-ը, այլեւ Եվրոպական Միությունը կոչ են անում արագացնել Մեծ Միջին Արեւելքի գոյառումը: Մի իսլամ երկիր Մարոկկոյից մինչեւ Պակիստան, Լիբանանը՝ մայրաքաղաք:

Իսրայելը ի՞նչ պիտի լինի: Սիոնիզմի համար՝ ո՛չ մի հարց: Իսրայելում ապրող 2 միլիոն հրեաներին, ինչպես որ բերին, այնպես էլ կտարածեն աշխարհով մեկ: Հենց նույն մութ ուժերի տարածաշրջանները: Մութ ուժը սիոնիզմն է: Աշխարհի տնտեսությունը ո՞վ է տնօրինում: Աշխարհի քաղաքականությունը ո՞վ է ղեկավարում: Օգտագործում են մասոնականությանը՝ մարդկությանը միահավատություն կամ անհավատ-ություն պարտադրելու, ապա եւ նրան ամբողջությամբ ստրկացնելու համար: Այսինքն՝ 1000 տարի պատերա՞զմ: Ո՞վ պիտի օգտվի այս բոլորից: Նա, ով լուռ ու կազմակերպված սպասում է առիթին: Մենք, որպես հավաքականություն, մեծ զրո ենք, որպե՞ս անհատ՝ կես հանճար, որպես խումբ՝ հոյակա՛պ: Փա՞ստ: Կարդացեք…

Համարակալումը որպես գլոբալացման միջոց

Մարդկության համընդհանուր համարակալումը դեպի գլոբալացումը տանող հիմնական քայլերից մեկն է: Գլոբալացումը դեմ է դեմոկրատիային, ազատամտությանը, ազգային մտածելակերպին եւ հայրենասիրությանը: Դրանց փոխարեն, գլոբալացված աշխարհում բոլոր մարդիկ պետք է համարակալվեն եւ լինեն ամբողջական, համապարփակ հսկողության տակ: Համարակալումը կատարվում է հիմնականում Համաշխարհային բանկի գումարներով, որն աշխարհը գլոբալացնող կառույցներից մեկն է: Հայաստանում մարդկանց համարակալումը սկզբում անցկացվում էր կամավոր, իսկ այժմ այն գործնականում կատարվում է պարտադիր կերպով, առանց մարդկանց կարծիքը հաշվի առնելու եւ առանց հանրաքվեի: Համարակալման օրենքն ընդունվել է չընտրված, գլոբալիստական ուժերի կողմից նշանակված խորհրդարանի կողմից: Այն տպավորությունն է, որ խորհրդարանի առաքելությունն է ընդունել ապազգային օրենքներ, այդ թվում՝ համարակալման վերաբերյալ օրենքը, վաճառել ազգային հարստությունները:

1917թ.-ին, երբ Լենինը եւ բոլշեւիկյան խունտան փորձում էին գլոբալացնել կամ "կարմրացնել" ամբողջ աշխարհը կեղծ մարքսիստական լոզունգներով, ինչպիսին էր "Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք"-ը, այն ժամանակ մարդկանց բաժանվեցին սովետական անձնագրերը: Նույնիսկ գրվեցին պոեմներ այդ անձնագիրը փառաբանելու նպատակով: Եվ ի՞նչ եղավ անձնագրերի բաժանումից եւ մարդկանց ըստ իրենց հասցեների գրանցելուց հետո: Ուղղակի իջեցվեց երկաթե վարագույրը, ստեղծվեց ազգերի մի մեծ բանտ, որտեղ թույլ ազգերն ընդհանրապես վերացան աշխարհի երեսից, այլախոհները, շատ մտավորականներ եւ մեծահարուստները "կոնտրա" եւ "կուլակ" մակդիրներով աքսորվեցին, հարստահարվեցին կամ գնդակահարվեցին: Սովետական գլոբալացման արդյունքում հարյուրաւոր ազգեր տվեցին միլիոնաւոր զոհեր: Ոչ ոք մի տեղ չէր կարող թաքնվել այն նույն անձնագրի պատճառով: Այսօր էլ փորձում են ստեղծել համաշխարհային ամբողջատիրական բռնատիրական համակարգ, որտեղ ժողովրդի կամքը հաշվի չի առնվելու, երկրների իշխանությունները ոչ թե ընտրվելու են, այլ նշանակվելու հատուկ առաջադրանքներ կատարելու համար: Այսօր այն բոլոր հայ պատգամավորները, մեծահարուստները եւ իշխանավորները, որոնք կատարում են սեփական ժողովրդի համարակալման պատվերը, վաղը իրենք են դառնալու առաջին զոհերը, ինչպես դա եղավ 1917 եւ 1937 թվականներին: Սիրելի՛ հայրենակիցներ, սթափվե՛ք, ընդդիմացե՛ք ստրկատիրությանը, պահպանե՛ք ձեր ինքնությունը, լեզուն, մշակույթը, հոգեւոր համոզմունքները եւ մարդկային աստվածատուր ազատությունը: Գլոբալացումը եւ մարդկանց համարակալումն անխուսափելի կամ բնական գործընթացներ չեն, ինչպես փորձում են ներկայացնել այսօրվա իշխանավորները եւ գլոբալիստներին ծառայող ուժերը: Կան ազատասեր ազգեր, որոնք մերժեցին համարակալումը, օրինակ, գերմանացիները, պորտուգալացիները, ճապոնացիները եւ բուլղարները: Հայը ճորտ չէ, Հայաստանը եւ աշխարհը վաճառքի ենթակա չեն: Ո՛չ համարակալմանը եւ գլոբալացմանը: Կեցցե՛ ազատ եւ անկախ Հայաստանը:

Հայաստանի հակագլոբալիստական միավորում

Փրկվելու միակ միջոցը գաղտնի, թաքուն, ծածուկ Արմենիզմն է (Հայիզմը-խմբ.), բոլորի՛ մասնակցությամբ, բոլորի՛ն հրահանգով: Այլապես... հասկացողին շատ բարեւ...

Հատված՝ Գերի Կահի "Աշխարհի գրավման ճանապարհին" գրքի (2006թ.) թարգմանիչ Հակոբ Բոզբումյանի "Նախերգանք"-ից

"Լուսանցք" թիվ 148 մայիսի 7-13, 2010թ.

Շար. 2 եւ վերջ

ԱՆԹԱԼԻԱՅԻ ԼՈՂԱՓԵՐԸ ԳՐԱՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԻՆ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեպետ վարչապետ Տիգրան Սարգսյանը ներքին կարգով նախարարներին հասկացրել էր, որ հրաժարվեն Անթալիա մեկնելուց, ամառային հանգիստը կազմակերպեն հանրապետության տարածքում եւ այդ կերպ զարգացնեն տեղական տուրիզմը, «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունն էլ «Անթալիայում հանգստացողը զինում է ադրբեջանական բանակը» կարգախոսով պաստառներ էր փակցրել Երեւանի փողոցներում, այնուամենայնիվ, նախորդ տարիների օրինակով այս ամառ էլ տուրիստական գործակալություններում ամենապահանջված վայրը Անթալիան էր: Մի շարք տուրիստական գործակալություններ, որ նախորդ տարի հայրենասիրությունից դրդված հրաժարվել էին տուրեր կազմակերպել դեպի Անթալիա ու միացել բոյկոտին, զգացին, որ ահագին գումար եւ հաճախորդ են կորցնում եւ այս ամառ կրկին հիշեցին Անթալիան:

J&A տուրիստական գործակալությունը 2009-ին հրաժարվեց Անթալիայում տուրեր կազմակերպելուց: «Կարծում էինք, որ դա մեզ օգուտ կբերի, եթե այլ երկրներ առաջարկենք կկարողանանք հակակշռել Անթալիային, սակայն հակառակը ստացվեց: Մեր մշտական հաճախորդների մոտ 60 տոկոսն այդ տարի գործակալության առաջարկներից չօգտվեց: Հիմնականում մեկնում էին Քոբուլեթի կամ Բաթում, Բուլղարիա եւ Կիպրոս մեկնողներ չունեցանք եւ աշխատեցինք վնասով», ներկայացնում է գործակալության տուրմենեջեր Արմեն Գրիգորյանը: 2009-ի դառը փորձից հետո նրա խորհրդով այս տարի կրկին դռները բացվեցին Անթալիայի առջեւ: Գործակալությունն այս տարվա արդյունքներից չափազանց գոհ է: «Հարցնողները, հետաքրքրվողները շատ են: Այս տարի մոտ 45-50 հոգի մեկնել են Անթալիա: Ինչ վերաբերում է գներին ապա դրանք տարբեր են՝ սկսած 1300-ից մինչեւ 15.000 դոլար», ասաց Արմեն Գրիգորյանը: Նրա ներկայացրած տվյալների համաձայն՝ հայերը հիմնականում նախընտրում են միջին գնի՝ 4000-7000 դոլար կազմող փաթեթը: 15.000 դոլարանոց փաթեթից օգտվել են մի շարք պատգամավորներ ու հայտնի քաղաքական գործիչներ: «Չեմ կարող ասել, էդ մարդիկ մյուս տարի էլ են մեր գործակալությունից օգտվելու: Կլիենտ կորցնելու խնդիր կա», եզրափակեց նա:

Անթալիա մեկնելը դարձել է նաեւ նորաձեւություն, քաղքենու մակարդակով էլիտար երեւալու անհագ ցանկություն:

35-ամյա Կարենն ու 27-ամյա Արփինեն հարսանեկան ճամփորդությունն անցկացրել են Անթալիայում: «Կյանքիս 2 հրաշալի շաբաթներն էին», հանգիստն է ներկայացնում Արփինեն ու հավելում, որ ամուսնու հետ մտադրվել են ամեն տարի մեկնել Անթալիա: «Շատ սիրեցինք այդ երկիրը», ասում է նա: Պարզաբանումից հետո, որ Անթալիան Թուրքիայում է գտնվում, Արփինեն ճշտեց. «Անթալիան սիրեցինք, ոչ թե Թուրքիան»:

Երկշաբաթյա հանգստի համար նորապսակները ծախսել են մոտ 5.000 դոլար: Թե ինչու այդ նույն գումարով Հայաստանում չեն կազմակերպել իրենց

հանգիստը՝ նորապսակները մատնանշում են երկրի բնակլիմայական ոչ նպաստավոր պայմանները, ականջ ծակող երաժշտությունն ու Սեւանի սառը ջուրը:

«Բացի այդ՝ ինչո՞ւ պետք է հետ մնանք ուրիշներից: Ես էդ գումարը վաստակել եմ ու որտեղ ուզենամ՝ էնտեղ էլ կծախսեմ: Մեր հանգիստը քաղաքականության հետ մի խառնեք», շարունակեց Կարենը:

Որ նախորդ տարիների օրինակով այս տարի էլ Անթալիան պահանջված էր՝ ապացուցվեց մի շարք տուրիստական գործակալություններ կատարած այցելությամբ:

«Էնջլ» եւ «Էյս» տուրիստական գործակալություններում թռիչքների հիմնական ուղղությունն Անթալիան էր: «Այս տարի ունեցել ենք ավելի քան 60 պատվիրատու, որոնք հանգստացել են Անթալիայում: Մեր գործակալությունում գները սկսվում են 400 դոլարից եւ հասնում 15000 դոլարի», ասաց գործակալության ներկայացուցիչ Սեւակ Շիրինյանը:

«Տրիումֆ» գործակալությունում էլ Անթալիա մեկնելու տուրեր կազմակերպում են, սակայն դրան հակակշռելու համար հաճախորդին առաջարկում են նաեւ Բուլղարիայի եւ Կիպրոսի հանգստավայրերը: Բայց դա էլ չի օգնում. եթե Բուլղարիա կամ Կիպրոս մեկնողների թիվը չի գերազանցում 2 տասնյակը, ապա Անթալիայում հանգստացողների թիվը հասնում է 50-ի:

«Այստեղ մեր բիզնեսի հարցն է դրված: Եթե հրաժարվենք Անթալիայից, ապա կունենանք ֆինանսական լուրջ կորուստներ: Եթե մարդիկ ցանկանում են հանգստանալ Անթալիայում, ապա մենք ստիպված ենք կազմակերպել տուր դեպի Անթալիա: Եթե վաղը այսքան մարդ ցանկանա գնալ Չիլի, ապա կկազմակերպենք տուր դեպի Չիլի», ասաց «Տաթեւ» գործակալության տուրմենեջեր Արթուր Բաբայանը:

Միայն Երեւան քաղաքում գործում են ավելի քան 100 տուրիստական գործակալություններ, նրանց մի քանիսն է, որ դեպի Անթալիա թռիչքներ չի կազմակերպում: Այս տարի ճգնաժամի հետեւանքով Հունաստանն ու Իսպանիան չափազանց մատչելի գներով իրենց հանգստավայրերն էին առաջարկում զբոսաշրջիկներին, բայց հայկական մտածելակերպն Անթալիայի սահմաններից այն կողմ չծգեց: Հայկական տուրիզմը բավարար չէ, վրացական ափերը՝ նույնպես, հունական կամ իսպանական լողափերի համար մակարդակը դեռ չի բարձրացել: Հետեւաբար նորաձեւ եւ հարուստ երեւալու ամենակարճ ուղին Անթալիան է:

Մշակույթ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պրոֆ. Օ. Պ. Աղայան

Ուշադրության արժանի է այն փաստը, որ Ռուսաստանի օգնությամբ Անդրկովկասի ազատագրման ծրագրում Օրին նախատեսում էր, որ Թուրքիայի դեմ, բացի հայերից, վրացիներից և ադրբեջանցիներից պայքարի կելնեն նաև հույները, քրդերը, արաբները, այսորիները և ճնշվող մյուս ժողովուրդները:

Սակայն ռուսական քաղաքականությունն այդ ժամանակ առաջնությունը տալիս էր Բալթիկայի շրջանների գրավմանը: Օրին առայժմ նշանակվեց դիվանագետ Պարսկաստանում տեղում իրավիճակը ուսումնասիրելու համար: Երբ ռուսական բանակը Պոլտավայի մոտ շվեդների դեմ հաղթանակի հասավ, Օրին փորձեց ռուսական ցարի ուշադրությունը դարձնել դեպի հարավ, ժամանակն էր ուժերը միավորելու և դեպի հարավ արշավելու:

Պետք է նաև նկատել, որ Պետրոս Առաջինին, իրականում, հետաքրքրում էր առևտրա-տնտեսական հարաբերությունների ընդլայնումը, Ռուսաստանի դեպի Կովկաս և Մերձավոր Արևելք առաջխաղացումը, նրա հզորության բազմապատկումը:

Այսպիսով, հայ ժողովրդի ազատագրության խնդիրը XVII դ– վերջերից, կապվելով ռուսական կողմնորոշման հետ, թևակոխում էր իր զարդացման նոր փուլը:

* * *

1711 թ. Օրին հանկարծամահ եղավ: Նրա սկսած գործը շարունակեցին Մինաս վարդապետը և Գանձասարի եսայի կաթողիկոսը, որը 1718 թ. Պետրոս Ա-ին հղած նամակում հայտնում էր Ռուսաստանի հովանու տակ մտնելու և իր նվիրվածությունը ցուցաբերելու հայ ժողովրդի պատրաստակամությունը:

Հայ ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշման գաղափարը մեծ տարածում գտավ և 18-դ. 20-ական թվականներին արդեն համակեց ժողովրդական լայն զանգվածներին: Ամենուրեք հայ ժողովուրդը քաղաքական և ռազմական պատրաստություն էր տեսնում և միջոցներ փնտրում իր նպատակին հասնելու համար: Ղարաբաղի սղնախները դարձան հազարավոր հայ երիտասարդների ռազմական կոփման օջախներ:

1721 թ. սկսվեց Պետրոս Ա-ի Մերձկասպյան արշավանքը և ռուսական զորքը՝ շարժվեց դեպի հարավ: Հայ մարտիկները Դավիթ-Բեկի գլխավորությամբ ազատագրական պայքարի ելան: 40 հազար հայ– վրացական ռազմիկներ կազմ ու պատրաստ սպասում էին միանալու ռուսական բանակին է կնքվեց Ղարաբաղի հայերի և Գյանջայի ադրբեջանցիների դաշինքը՝ Թուրքիայի դեմ համատեղ պայքար մղելու և Ռուսաստանին հավատարիմ մնալու մասին: Շուտով ռուսական զորքը գրավեց Դերբենտը, Բաքուն և հասավ Ռեշտ: Հայ ժողովուրդը, համոզված էր, որ հասել է փրկության օրը:

Բայց այդ վճռական պահին արևմտյան տերությունները, մտահոգված Ռուսաստանի դեպի Արևելք առաջխաղացման վտանգով, սուլթանին հրահրեցին պատերազմ հայտարարել Ռուսաստանին: Ցարը, պատրաստ չլինելով Պարսկաստանի և Թուրքիայի դեմ երկու ճակատով պատերազմելուն, ստիպված էր տեղի տալ: Հայ ժողովուրդը կանգնեց նոր հիասթափության առջև...

Այն ժամանակ, երբ հայ ժողովուրդը օգնություն էր խնդրում արևմտյան տերություններից, սրանք հայ գործիչներին մատնացույց արեցին ռուսական արքունիքը, բայց երբ վերջինս, գործելով իր շահերին համապատասխան, փաստորեն իրական պայմաններ էր ստեղծում հայ ժողովրդի ազատագրության համար, այդ նույն տերություններն օգնեցին Թուրքիային իր կրնկի տակ նետելու նաև հայ մյուս զանգվածները:

Ո՞ւմ վրա պետք է հենվեր հայ ժողովուրդն իր ազատագրական պայքարում: Դարավոր փորձը ցույց էր տալիս, որ նա պետք է հենվեր իր սեփական ուժերի և ռուս ժողովրդի օգնության վրա, դաշնակցեր իրեն բախտակից անդրկովկասյան ժողովուրդների հետ:

Չնայած Ռուսաստանից ակնկալվող օգնությունը չստացվեց, հայերը Դավիթ-Բեկի գլխավորությամբ շարունակեցին անհավասար ազատագրական պայքարը, նվաճեցին Սյունյաց աշխարհի անկախությունը՝ Հալիձորը դարձնելով շարժման կենտրոնը, և կարողացան դիմանալ օսմանյան բազմապատիկ ուժերին: Դա հայ ժողովրդի ազատագրական պայքարի ամենապայծառ էջերից մեկն էր:

1728 թ. Դավիթ-Բեկի մահից հետո, ազատագրական մարտերը գլխավորում էր Մխիթար սպարապետը, որը սակայն շուտով դավադրության զոհ դարձավ: Դրանից հետո էլ ազատագրական մարտերը թուրք բռնակալների դեմ շարունակվեցին: Այդ մարտերը գլխավորում էին

աշխարհազորային խմբերի ղեկավարներ Այվազ-Բեկը, Մելիք-Ղուկասը և ուրիշներ: Նրանք միավորելով Ղափանի մի շարք աշխարհազորային խմբերի, քանիցս պարտության մատնեցին թուրքական զորքերին:

Ռազմական ակտիվ գործողություններն ու ազատագրական մարտերը չդադարեցին մինչև 1730 թ.: Նույնիսկ 1735 թ. ըմբոստությունները շարունակվում էին:

Հայ գյուղացիության ըմբոստացող խմբերին Սյունիքում, Արցախում եւ «Ադրբեջանում» հաճախ միանում էին նաև ադրբեջանական առանձին ռազմա-խմբեր:

Թուրքերը գրավված շրջաններում ծանր հարկային սիստեմ էին սահմանում: Աշխատավորությունը ենթարկվում էր ծանր հարստահարման և ունեզրկման: Նյութական բարիքների կողոպուտը կատարվում էր զինվորական ուժերի բիրտ ու անզուսպ կամայականության պայմաններում: Թուրքական իշխանությունները որոշ դեպքերում պաշտպանության տակ էին առնում հայ ֆեոդալների, մուլքադարների և էջմիածնի վանքի կալվածատիրական իրավունքները և դրանով ձգտում հնազանդեցնել նվաճված շրջանների աշխատավորուվորությանը:

1732 թ. Ռեշտ քաղաքում ստորագրված ռուս-իրանական պայմանագրի համաձայն Ռուսաստանը, հեռանալով մերձկասպյան շրջաններից, դրանք հանձնեց Պարսկաստանին: Այդ ժամանակաշրջանի հայ ազատագրական ամենաաչքի ընկնող գործիչներից էր Գիզակի Մելիք-Եգանը, որը կարողացավ Ղարաբաղի ու այլ հայկական շրջանների համար որոշ ինքնուրույն եւ կիսանկախ վիճակ ստեղծել: Նրա ջանքերով հիմնվեցին Արցախի «Խամսայի մելիքությունները» Տող կենտրոնով:

1735 թ. հուլիսի 8-ին Եղվարդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքական զորքերը գլխովին ջախջախվեցին: Այստեղ մի շարք բարձրաստիճան փաշաների հետ միասին սպանվեց նաև սարասկար Աբդուլլա փաշան:

Բռնակալ Նադիր շահը, սիրաշահելով հայ իշխաններին ու հոգևորականությանը, նպատակ ուներ վերջ տալ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշմանը: 1737 թ. Նադիր շահը ներխուժեց Աֆղանստան և ապա Հնդկաստան, կողոպտեց մեծ հարստություն: Բուն երկրում ծանր հարկերը, հարկահավաքները և ավատատերերի կամայականությունները գնալով ավելի էին ծանրացնում աշխատավոր գյուղացիության վիճակը:

Նադիր շահի սպանությունից հետո (1747) շուրջ հիսուն տարի տևած իշխանությունը և առանձին տիրակալների կամայականությունները երկիրը վերջնականապես հասցրին քայքայման : Ուժեղացան կենտրոնախույս ուժերը: Անդրկովկասում ստեղծվեցին անկախ իշխանություններ: Վրաստանում Քարթլին ու Կախեթը անկախանալով, 1762 թ. միավորվում են Հերակլի իշխանության տակ և շուտով ազդեցիկ դիրք գրավում Անդրկովկասում: Անկախացան նաև Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Գյանջայի, Շամախիի, Բաքվի, Ղուլբայի և այլ խանություններ:

Անընդհատ ուժեղացող կամայականությունների և հալածանքների պայմաններում Երևանի խանը, դիմելով խարդախ միջոցների, հայերին ամբողովին իրավազրկում է: Հայ իշխաններից Մելիք-Մանուչարը դառնում է Երե–ևանի խանի դավադրության զոհը: Երևանի հայերը դիմում են վրաց Հերակլ Բ-ի հովանավորությանը: Հայկական մի շարք գյուղերի բնակիչներ դաղթում են Վրաստան և բնակություն հաստատում Գորիում, Սղնախում, Թիֆլիսում եւ այլ վայրերում:

Ստեղծված ծանր վիճակից դուրս գալու միակ ելքը Անդրկովկասի առաջավոր մտածողները տեսնում էին Ռուսաստանի օգնության մեջ: Վրաց թագավոր Թեյմուրազ Բ-ը 1760 թ. մեկնում է Ռուսաստան: Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցին 1760 թ. Ելիզավետա կայսրուհուն ուղղված կոնդակով խնդրում է ընդառաջել Թեյմուրազ թագավորի առաքելությանը, Հայաստանն ու Վրաստանը փրկել ավերածություններից: Ուշագրավ է նաև հաջորդ կաթողիկոս Սիմեոն Երևանցու Եկատերինա Բ-ին ուղղված կոնդակը և կայսրուհու 1768 թ. հուլիսի 30-ի հրովարտակը, որով վերականգնվում էին էջմիածնի՝ ռուսահայերի նկատմամբ ունեցած նախկին իրավունքները: Կայսրուհին հատկապես նշում է, որ ռուսահայերը միշտ կմնան ռուսական կայսրության հովանու ներքո: Այդ առթիվ Սիմեոն Երևանցին ռուսական կայսերական տան պատվին հայկական եկեղեցիներում հատուկ մաղթանք մտցրեց, որը կատարվում էր մոտ մեկուկես դար:

Հայ-ռուսական հարաբերությունների զարգացման այս նոր աստիճանում լայն թափ ստացան հայ ազատագրական շարժումները: Հատկապես ակտիվ գործունեություն ծավալեցին հնդկահայերը՝ Մադրասի, Կալկաթայի, Բոմբեյի, Հայդարաբադի, Դելիի և այլ քաղաքների հայկական գաղթօջախները: Հայերը «Արևելա-հնդկական ընկերության» հովանավորությամբ, մեծ ազ-դեցություն էին ձեռք բերել Հնդկաստանի և միջազգային առևտրի ասպարեզում: Սակայն XVIII դ. երկրորդ կեսին Հնդկաստանում անգլիական գաղութարարների դիրքերի ամրապնդման հետ մեկտեղ Եվրոպայի և հայ առևտրականների գործունեությունը սահմանափակվում է: Հայ առևտրականներն իրենց կապիտալն անգլիական ուժեղ մրցակցությունից փրկելու համար նոր շուկաներ են փնտրում: Նրանք ծրագրում են Հայաստանը օտար լծից ազատագրել և այն դարձնել իրենց տնտեսական և առևտրական գործունեության ասպարեզ: Հնդկահայերին հուզում էր հայ ժողովրդի հալածված ու ճնշված վիճակը: Նրանք ոգևորված էին Ղարաբաղի մելիքների և մյուս գործիչների ձեռնարկած ազատագրական պայքարով:

Այս շրջանի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից էր հնդկահայ մեծ հայրենասեր Հովսեփ էմինը: Նրա հայրը, որ ծագում էր Իրանի Համադան քաղաքից, հալածանքներից խուսափելով հեռացել էր Հնդկաստան և հիմնվել Կալկաթայում: Դեռ փոքր հասակից էմինը մեծ հետաքրքրածությամբ ուսումնասիրում է Հայաստանի պատմությունը, ապա նվիրվում հայ ժողովրդի ազատագրման գործին: Նա մեկնում է Անգլիա, ապրելով ծանր պայմաններում, մտերմանում է մի շարք ականավոր գործիչների հետ, լրջորեն տիրապետում հրետանային գործին, խորանում ամրոցաշինության ասպարեզում: Անգլիայի կառավարական շրջաններում նա հայերի ազատագրման հարցի շուրջը բանակցություններ է վարում, մինչև անգամ տեսակցում Անգլիայի վարչապետ Պիտտի հետ, բայց համոզվում է, որ Անգլիան ոչ մի շահագրգռվածություն չի ցուցաբերում հայկական պետականության վերականգնման գործում: Այս համոզմամբ նա 1759 թ. անցնում է Հայաստան, էրզրումում ու էջմիածնում հանդիպումներ է ունենում հայ գործիչների հետ: Անդրկովկասի վիճակին ծանոթանալով, նա վերանայում է հայ ժողովրդի ազատագրության իր ծրագիրը: Եթե մինչ այդ նա կարծում էր, որ միայն Ղարաբաղի և Վրաստանի ուժերով հնարավոր կլինի ապահովել հայրենիքի ազատագրությունը, ապա այժմ համոզվում է, որ առանց Ռուսաստանի աջակցության անհնար է հասնել այդ նպատակին: Նա սկսում է ռուսական արքունիքի հետ կապեր հաստատելու միջոցներ որոնել և շուտով 1761 թ., մեկնում է Լոնդոն, ուր ռուսական դեսպան իշխան Գոլիցինից ստանում է Ռուսաստան մեկնելու անցագիր և հանձնարարականներ:

Պետերբուրգում՝ 1761 թ. աշնանը, Հովսեփ էմինը հանդիպում է կոմս Մ. Ի. Վորոնցովին, որը գիտակցելով

Անդրկովկասի նշանակությունը Ռուսաստանի համար, հավանություն է տալիս էմինի ծրագրին: Այդ ծրագիրն արժանանում է նաև Եկատերինա Բ կայսրուհու հավանությանը: Ռուսական կառավարության հանձնարարականով էմինը 1763 թ. Մոսկվայի ու Աստրախանի վրայով մեկնում է Վրաստան. Մոսկվայում նրան է միանում իր ազգական, Մադրասի ապագա հայրենասիրական խմբակի անդամ, ծագումով Ղարաբաղցի Մովսես Բաղրամյանը: Աստրախանի և Հյուսիսային Կովկասի հայերը մեծ խանդավառությամբ են ընդունում էմինին և խոստանում օգնել նրա ծրագրի իրականացմանը: էմինը մեծ տպավորություն է թողնում նաև Հերակլ թագավորի վրա և նրա հանձնարարությամբ ձեռնամուխ է լինում վրաց զորքի մեջ եվրոպական զինավարժություն մտցնելու գործին:

Հայ երիտասարդությունը, համոզված, որ հասել է ազատության ժամը, սկսում է համախմբվել էմինի շուրջը: Հաշվի առնելով հայ ազատագրական պայքարի դասերը, Հովսեփ էմինը կազմեց շարժման առավել հասուն ծրագիր, որի հիմքը պետք է հանդիսանար հայ-վրացական ուժերի համախմբումն ու համատեղ պայքարը: Արևելյան և արևմտյան հայությունը, վրաց ժողովրդի հետ միավորված, պետք է համընդհանուր ապստամբություն բարձրացներ և թոթափեր օտար բռնակալների լուծը, ստեղծեր հայ-վրացական պետություն՝ Ռուսաստանի հովանավորության ներքո:

Այս շրջանում սուլթանական կառավարությունն ուժեղացող տնտեսական անկումից ու քաղաքական ճգնաժամից Թուրքիան դուրս բերելու ելքը շարունակում էր տեսնել ժողովրդին և հատկապես քրիստոնյաներին կողոպտելու մեջ: XVIII դ. երկրորդ կեսին երկրի ավագանին, կազիները, նայիբները ու այլ պաշտոնյաներ հարկերի դիմաց «աղքատների ձեռքից խլում էին նրանց ունեցվածքը, վաճառել տալիս նրանց անասուններն ու կենդանիները...»:

Առավել ծանր էր հայ ժողովրդի վիճակը: Տնտեսական, քաղաքական և կրոնական հալածանքները նրա նկատմամբ հասել էին ծայր աստիճանի– ավատատերերի միջև մղվող կռիվները, ավազակային խմբերի հարձակումները, կենտրոնախույզ ուժերի դեմ կառավարական զորքերի ձեռնարկած արշավանքները ավերում ու ամայացնում էին բնակավայրերը: Բնակչությունը ոչնչացվում կամ գերի էր տարվում: Հայերի արտագաղթը մասսայական բնույթ էր ստանում: Օրինակ, Մանազկերտի 350 հայկական գյուղերից XVIII դ. վերջին մնացել էին ընդամենը 20-ը:

XVIII դ. երկրորդ կեսից Արևմտյան Հայաստանի մի շարք լեռնային ամրոցներ և հատկապես Մուշի բերդերը դառնում են հայ ազատագրական շարժման կենտրոններ: Այդ գործում նշանակալից դեր էր խաղում ս. Կարապետ վանքի վանահայր Հովնանը, որի հետ կապ էր հաստատել և մեծ հույսեր էր կապում Հովսեփ էմինը: Վանահայրը ոչ առանց հիմքի վստահեցնում էր էմինին, որ արևմտահայերը պատրաստ են միանալու վրաց զորքերին:

Սակայն ստեղծված ներքին և արտաքին ոչ նպաստավոր պայմանների հետևանքով ձախողվեց Հովսեփ էմինի և Հովնանի նախապատրաստած ա–պրստամբական ծրագիրը: Սիմեոն Երևանցին խորհուրդ է տալիս Հերակլին՝ էմինին հեռացնել Անդրկովկասից, գտնելով, որ նրա գործունեությունը նոր չարիքների առիթ կտա: Հովսեփ էմինը, հայրենիքի ազատագրման Ցերազանքը սրտում անթեղած, վերադառնում է Հնդկաստան:

Բայց հայկական շրջաններում ազատագրական խմորումները շարունակվում էին:

Շար. 3

Անվանի մաթեմատիկոսը հեռացավ

Կյանքից հեռացավ անվանի մաթեմատիկոս, դպրոցական եւ ուսանողական օլիմպիական շարժման հիմնադիր, սիրված մանկավարժ ու եռանդուն քաղաքացի Գառնիկ Աղասու Տոնոյանը:Գառնիկ Տոնոյանը ծնվել է Երեւանում՝ 1936 թվականի հոկտեմբերի 29-ին: Լինելով օժտված աշակերտ՝ 6-րդ դասարանից տեղափոխվել է 10-րդ դասարան եւ եղել է այդ ուսումնական տարվա Շիրակի մարզի միակ ոսկե մեդալակիրը: Գերազանցությամբ ավարտելով ԵՊՀ ֆիզմաթ ֆակուլտետը՝ 1959 թ. ընդունվել է ասպիրանտուրա՝ ակադեմիկոս Ա. Շահինյանի գիտական ղեկավարությամբ: Փոխելով գիտական աշխատության թեման՝ 1972 թ. Մոսկվայում ստացել է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան՝ հանրահայտ մաթեմատիկոսներ Ի. Մ. Յագլոմի եւ Վ. Գ. Բոլտյանսկիի ղեկավարությամբ: 1978 թ. Մոսկվայում ստացել է դոցենտի կոչում: Ասպիրանտուրայի տարիներից մինչեւ 2004 թ. Գ. Տոնոյանը դասավանդել է մաթեմատիկական տարբեր առարկաներ: 2004 թ.–ից մինչ մահը աշխատում էր ԵՊՀ ռեկտորատում: Գ. Տոնոյանը մաթեմատիկայի, կենսաբանության, մաթեմատիկական փիլիսոփայության դասավանդման ոլորտում ավելի բան 50 գրքերի եւ 300 գիտական հոդվածների Իեղինակ է: 1988 թ.–ին հիմնադրել եւ խմբագրել է «Ինտեգրալ» գիտահանրամատչելի բնագիտական հանդեսը: 2003 թ.–ից «Գիտելիք» պարբերականի գլխավոր խմբագիրն էր:



«Մաթեմատիկան դպրոցում», «Բնագետ», «Մաթեմատիկա պլյուս» եւ այլ հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ էր:

Գ. Տոնոյանը նաեւ Աշխարհի ազգային մաթեմատիկական օլիմպիադաների ֆեդերացիայի (Ավստրալիա) անդամ էր, Աշխարհի տաղանդների որոնման միջազգային ֆեդերացիայի դատավորական ատյանի (ԱՄՆ) անդամ, Ամերիկյան մաթեմատիկական ընկերության անդամ, Գերմանիայի Յու. Լիբիխի անվան համալսարանին կից միջազգային մաթեմատիկական դիդակտիկայի ընկերության (Գերմանիա) անդամ, Միջազգային կենսագրական կենտրոնի (Անգլիա, Քեմբրիջ) գլխավոր տնօրենի տեղակալ:

Տարիներ շարունակ Գ. Տոնոյանը համամիութենական մրցանակաբաշխությունների հանձնաժողովի անդամ էր: 1996–2008թթ. իր ջանքերն ու եռանդն է ներդրել Հայաստանում մաթեմատիկական օլիմպիական շարժման եւ

դրա զարգացման համար: Ավելի բան 40 տարի եղել է Հայաստանի դպրոցականների հանրապետական օլիմ-պիադայի հանձնաժողովի նախագահը: Նա նաեւ բուհերի ուսանողների համար կազմակերպել է մաթեմատիկայի բազում օլիմպիադաներ՝ ինչպես ներկա, այնպես էլ Խորհրդային Հայաստանում:

The Marquis Who's Who
Publications Board

Certifies that

Garnik Aghassi Tonoyan

is a subject of biographical record in

Who's Who in Science and Engineering
Seventh Edition
2003-2004

inclusion in which is limited to those individuals who have demonstrated outstanding achievement in their own fields of endeavor and who have, thereby, contributed significantly to the betterment of contemporary society.

Գ. Տոնոյանի զերնպատակը գիտելիքի տարածումն էր երիտասարդության շրջանում, ինչպես նաեւ տաղանդավոր երիտասարդների բացահայտումն ու նրանց աջակցումը: 1991-1999 թթ. նա Ա. Շիրակացա անվան մաթեմատիկական թեքումով երեկոյան դպրոցի հիմնադիր տնօրենն էր:

Գ. Տոնոյանը արժանացել է բազմաթիվ հեղինակավոր մրցանակների ել կառավարական պարգեւների. ԽԱՀՄ Բարձրագույն եւ միջնակարգ կրթության նախարարության կողմից՝ «Պատվո վկայագիր» (1982), ՀԽԱՀ ժողովրդական կրթության մինիստրության կողմից՝ «Խաչատուր Աբովյանի հուշամեդալ» (1990), Հայաստանի կառավարության կողմից՝ հուշամեդալ (1993), ՀՀ կրթության եւ գիտության նախարարության Ոսկե հուշամեդալ՝ կրթության եւ գիտության ոլորտում ներդրած մեծագույն ավանդի համար (2000), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության 15-ամյակի հուշամեդալ (2006) եւ այլն:

Գ. Ա. Տոնոյանը ամուսնացած էր, ուներ երեք դուստր, մեկ որդի եւ մեկ թոռ:

Խոհեր

Մեր անցած ճամբան

Թ. Ղարախանյան Միրակցի

Հարգելի վարպետ Համոն նաեւ ասաց որ Ամերիկյան ընկերությունների մեծամեծների կանայք իր հաճախորդն են եւ որոշներն էլ հայ մեծամեծեր են ու ինքը կարծում է առաջին մեկի հետ որ իմ մասին խոսի, պարոն Հրանդ Մինասյանի տիկինն էր լինելու: Վարպետ Համոն խոսելով պարոն Մինասյանի մասին պատմեց թե այն լավ Ջուղայի տղերքից է որ շատ օտար ջուղացիների նման Հնդկաստան է կրթվել եւ "Երկրաբանություն" մասնագիտության համար հնդկաստանից Անգլիա էր գնացել եւ այդքան հաջողությունից հետո վերադարձել էր Պարսկաստան: Վարպետ Համոն ասաց, որ շատ եւ շատ հայ անձնավորություններ մեծ պաշտոններ ունեն նոր բացված ընկերությունների մեջ եւ լավ մարդիկ են, օրինակի համար հենց այս պարոն Մինասյանն որքան օգտակար է գտնվում Ավազ քաղաքի հայկական նորակառույց եկեղեցու, 6 դասարանոց դպրոցի նորոգումի եւ միության այլ աշխատանքների մեջ:

Երկար խոսք բացվեց Ավազ քաղաքի լավ եւ հաջողակ եւ օգնող հայ մարկանց մասին օրինակ՝ ՆԷԳՐՈՅԻ "Negro" Վազգեն-ը որ հենց այդ անունով մեծ խանութ ուներ "24 Մեթրի" անունով փողոցի գլխին հարյուրավոր օտարազգիներ հատկապէս ամերիկացի եւ եվրոպացիներ հաճախորդներով, կամ Մուկուչը (ԿԱԿԱԼ մականունով), որ Վազգենից մի քիչ հեռու գեղեցիկ նպարավաճառի կենտրոն ուներ կամ Մինասը (ՃԷԿԻ Մինաս մականունով) որ հսկա մեխանիկի կենդրոն ուներ "30 Մեթրի" անունով փողոցի վրայ. այս անուններից բացի նորեկներ կային Հրանդ Մինասյանի նմաները եւ կամ Հովսեփը որ Օմիդդիյե քաղաղից էր տեղափոխվել եւ ձեռնբաց մարդ լինելով թե հայկական եւ թե պարսկական դպրոցներին էր օգնություն հասցնում: Ասենք թէ ահվազ քաղաքում մինչեւ վեցերորդ հայկական դպրոց կար, որ մի քանի տարի առաջ էր սարքվել հենց այս տեղական ուժերով, բայց Նաֆտի ենկերության տեղափոխումը Մասչէդ-Սուլեյման, Աղաջարի, Օմիդդիե պատճառ դարձավ օտար տեղերից դեպի Ահվազ քաղաք այնքան հայության թիվը շատացավ, որ եկեղեցու պակասը կար եւ վարչությունը որոշեց նոր եկեղեցի կառույցել: *Այսքան կարելի է ասել որ այդ հին ու նոր եկող մարդկանցից հազիվ մի երկուսն էին կուսակցական* : Հայապահպանման եւ ազգասիրական շունչն ու հոգին այնքան պարզ ու նկատելի էր որ միայն կարելի է ասենլ **ՈՄԿԻ ՄԵԲՈՒՆԴ**; Մի օտար բան էլ նկատելի էր որ այդքան մեծ թվով նորեկ հայեր եկան եւ փոխադրվեցին Ահվազ քաղաք, բայց Աբադան Քաղաքից մատահաշիվ ընտանիքներ փոխադրվեցին Ահվազ քաղաք. Աբադանի Նաֆտային հայ եւ պարսիկ աշխատաւորները շատերը ավելի կրթված լինելով փոխադրվեցին մայրաքաղաք Թեհրան, Նաֆտային Ընկերության տնօրինության կենտրոն:

Ցավակցական

Այսու մեր խորին վշտակցությունն ենք հայտնում սիրելի Լուսինե Տոնոյան՝ Սիրակիին եւ Արնո Սիրակիին իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

Պրոֆ. Գառնիկ Տոնոյանի

ցավալի մահվան կապակցությամբ:

Լույս-ի խմբագրություն

Ցավակցական

Այսու մեր խորին վշտակցությունն ենք հայտնում սիրելի Թամ եւ Ալվարդ Սիրակիներին իրենց կրած ծանր եւ անփոխարինելի կորստի՝

Պրոֆ. Գառնիկ Տոնոյանի

ցավալի մահվան կապակցությամբ:

Լույս-ի խմբագրություն

Վանիկ Բաղդասարյան